

Փ Ա Ռ Ք Մ Ե Ծ Ա Օ



Տ. Տ. ՎԱԶԳԵՆ Ա. ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԿԵՆՍԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

1975 թվականի հոկտեմբերին լրացավ Տ. Տ. Վազգեն Ա. Հայոց Հայրապետի գահակալության քսանամյակը:

1976 թվականի սեպտեմբերի 26—հոկտեմբերի 5 օրերին Մայր Աթոռում և հայ եկեղեցու բոլոր թեմերում, Գերագույն հոգևոր խորհրդի որոշումով, հանդիսավորությամբ և համազգային շուքով կնշվի Նորին Սրբության գահակալության քսանամյա հոբելյանն ու այդ առթիվ Մայր Աթոռում կկատարվի նաև սրբալույս մեռոնի օրհնություն:

Տ. Տ. Վազգեն Ա. Հայոց Հայրապետի գահակալությունը հանդիսացավ պատմական նշանակալից իրադարձություն հայ եկեղեցու և Մայր Աթոռի մե՛ր օրերի տարեգրության մեջ:

Այդ գահակալությունը ցույց տվեց, որ Հայաստանյայց եկեղեցին, հանձին Տ. Տ. Վազգեն Ա. Հայոց Հայրապետի, ունի աստվածառաք ու առաքելաշավիղ մի քաջ հովվապետ, որն Իր սուրբ Աջը տարածել է բովանդակ հավատացյալ հայության վրա և Իր հոգևոր, հայրենասիրական ու ազգային առաքելությունը կատարում է նվիրումով, սիրով դեպի իր Աթոռը, իր եկեղեցին, իր ժողովուրդն ու հայրենիքը:

Նորին Ա. Օծություն Տ. Տ. Վազգեն Ա. Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը ծնվել է 1908 թվականի սեպտեմբերի 20-ին Ռումինիայի մայրաքաղաք Բուխարեստում, արհեստավորի բարեպաշտ ընտանիքի ծոցում:

Վեհափառ Հայրապետի պապն ու հայրը ժառանգաբար եղել են արհեստավորներ, որոնք իրենց հանապազօրյա հացը ձեռք են բերել արդար վաստակով և քրտնաջան աշխատանքով:

Վեհափառ Հայրապետի հայրը՝ Պալճյան ընտանիքի միջնեկ որդի Արաբաբեկը, բնիկ թեքերդաղցի, արհեստով կոշկակար, 1895—1896 թվականներին, Կոստանդնուպոլսի ծանոթ հայկական տխուր իրադարձությունների ժամանակ, իր եղբայրների և քույրերի հետ գաղթում է Ռումիհիս և հաստատվում Բուխարեստում: Այդ օրերին Պալճյանների գաղթական ընտանիքը բաղկանում էր 6 հոգուց՝ երեք եղբայր, երկու քույր և մայր: Իրենց նոր հայրենիքի մայրաքաղաք Բուխարեստում Պալճյան երեք եղբայրները, ձեռք-ձեռքի տված, լծվում են աշխատանքի և ապրում նույն անհասկանալի կյանքի մեջ, իսկ մայրը և մեկ եղբայրը, իսկապես, համարվում Պալճյան երեք եղբայրները, ձեռք-ձեռքի տված, լծվում են աշխատանքի և ապրում նույն անհասկանալի կյանքի մեջ, իսկ մայրը և մեկ եղբայրը, իսկապես, համարվում Պալճյան երեք եղբայրները, ձեռք-ձեռքի տված, լծվում են աշխատանքի և ապրում նույն անհասկանալի կյանքի մեջ:

Ուսուցչուհի Սիրանույշ Պալճյանն իր շրջապատում մեծ հարգանք էր վայելում՝ «Սիրանույշ վարժուհի» համեստ կոչումով, և մանավանդ իր բարի, առաքինի, հայ կնոջը հատուկ ջերմ սրտով: Նա յոթ տարի որպես ուսուցչուհի պաշտոնավարել էր Ռոդոստոյի հայոց ս. Թադևոսի և ս. Խաչ թաղի ազգային վարժարաններում, նախքան Ռումիհիս գնալը:

Արաբաբեկ և Սիրանույշ նորապսակ ամուսինների ընտանեկան երդիկը 1908 թվականի սեպտեմբերի 20-ին քախտավորվում է Լևոն-Կարապետի երջանիկ ծնունդով:

Օրորոցից նախախնամության Աջն է բարձրացնում և առաջնորդում Նրան ընտանեկան խոնարհ հարկից մինչև Լուսավորչի Գահը:

1913 թվականին Պալճյանների ընտանիքն այցելում է Կոստանդնուպոլիս: Չորս տարեկան փոքրիկ Լևոն-Կարապետը հաճախում է Կետիկ-փաշայի ազգային մանկապարտեզը: Լևոն-Կարապետն առաջին անգամ հայերեն այբբենարանը հեզել է սկսում ուսուցչուհի մոր ծնկների սուաջ: Երեխայի նախադարձական դաստիարակության գործում առանձնապես մեծ ազդեցություն է թողել նրա սրտի, հոգու և մտքի վրա իր հարազատ մայրը, որն իր մայրական անխաբոյալ կաթի հետ իր զավակին ջանքել է նաև հավատի սրբազան հուրը, մայրենի լեզվի քաղցրությունն ու ճաշակը, Հայաստանյայց եկեղեցու պաշտամունքը, ազգասիրության շունչն ու ոգին:

1914 թվականի գարնանը մանուկ Լևոն-Կարապետն Իր ծնողների հետ վերադառնում է Ռումիհիս, ուր աշակերտում է տեղի հայկական ազգային մանկապարտեզին, մինչև 1916 թվականը: Համաշխարհային առաջին պատերազմի տխուր օրերին, Պալճյան ընտանիքը, հազարավոր հայ գաղթականների հետ, ապաստան է գտնում Օդեսա քաղաքում, 1916 թվականի ձմռանը: Երեխայի դաստիարակության հոգսը սիրով ստանձնում է և շարունակում մայրը: Միաժամանակ ծնողների նյութական ծանր գրկանքների գնով տանը երեխային մասնավոր դասեր է տալիս ուսուցիչ և մտավորական Աշոտ Սպանդարյանը:

1919 թվականին՝ վերադարձ Ռումիհիս:

Ուսումնաստեղ Լևոնն Իր նախնական, միջնակարգ ու բարձրագույն կրթությունն ստանում է Բուխարեստի նախ հայկական, ապա գերմանական ու պետական ուսումնական հաստատություններում: Նրա ծնողները կանգ չեն առնում ոչ մեկ զոհողության առաջ՝ իրենց միակ որդուն դաստիարակելու գործում: Հայրն ու մայրը սրտագին համբերությամբ և հաճախ զրրկանքով, գիշեր ու ցերեկ ասել են ծեծում՝ հայթայթելու համար իրենց որդու դպրոցական ծախսերը:

1928 թվականին Լևոն-Կարապետը վերջացնում է միջնակարգ վարժարանի առևտրական ճյուղը և ստանում վկայական՝ միաժամանակ հաճախելով հայկական վարժարանին կից բացված հայոց լեզվի և գրականության գիշերօթիկ դասընթացներին, դաստիարակ-ուսուցիչ Գևորգ Ղազարյանի ղեկավարության ներքո: Առևտրական-հաշվապահական տեխնիկումն ավարտելուց հետո, մտածում է Իր աշխատանքով թե ու թիկունք լինել Իր Ծնողներին: Բայց ուսման ծախսով ու սերը Նրան տանում են դեպի համալսարան:

Պատանի Լևոն-Կարապետը Բուխարեստում փոքր հասակից անդամակցել է Հայ մարմնակրթական միությանը և մինչև 25 տարեկան հասակն աշխատել այդ միության մեջ՝ մախ որպես սկաուտ և ապա ղեկավար անդամ:

Ընտանիքը, դպրոցը և հայկական շրջանակը լրացնում և ամբողջացնում են պատանի Լևոնի միջնակարգ կրթությունը: Խոստումնալից երիտասարդի առաջ այժմ բացվում են գործունեության ավելի լայն ապարեզներ: Նա ծանոթ և սիրված դեմք է Բուխարեստի հայ ազգային շրջանակներում, փնտրված ու ծափահարված «ասմունքի վարպետ» բոլոր հանդեսներում, ուր Թումանյանից, Վարուժանից, Մեծարենցից, Սիամանթոյից, Չարենցից, Ծուշանիկ Կուրդիանյանից Իր կատարած արտասանություններով հայրենասիրական գերազանց ապրումի պահեր է շնորհում հանդիսատեսներին:

Իպրոցական արձակուրդներին, տարին 2—3 ամիս, Նա, դեռևս 14 տարեկանից սկսած, ստիպված է լինում աշխատել հայ առևտրականների մոտ՝ ապահովելու համար Իր դպրոցական տարեկան վճարումները: Իսկ 1929 թվականից սկսած օգնական ուսուցչի և քարտուղարի պաշտոն է ստանձնում Բուխարեստի հայոց վարժարանում՝ միաժամանակ շարունակելով Իր ուսումը:

1931—1932 ուսումնական տարեշրջանում Լևոն Պալճյանը, մուտքի քրճությունները հաջողությամբ հանձնելուց հետո, մտնում է Բուխարեստի պետական համալսարանի գրականության և փիլիսոփայության ֆակուլտետը՝ մասնագիտություն ընտրելով մանկավարժությունը, հոգեբանությունը և հասարակական գիտությունները: Համալսարանը վճռական նշանակություն է ունենում Պալճյանի մտավոր զարգացման, մտահորիզոնի ընդլայնման, մանկավարժական-գիտական, հասարակական-ազգային հայացքների ձևավորման բնագավառում: Երիտասարդ համալսարանականը մեծ սիրով և եռանդով զբաղվում է մանկավարժության, գրականության և փիլիսոփայության առաջավոր մտքերի ուսումնասիրությամբ: Համալսարանում ուսանելու տարիներին և՛ աշխատում է ազգային վարժարանում, և՛ սովորում, միաժամանակ գործուն մասնակցություն բերելով հայ ազգային-հասարակական աշխատանքների մեջ: Նա այդ շրջանում աչքի է ընկնում որպես գործուն անդամներից մեկը Բուխարեստի Հայ ուսանողների միության, որպես աշխատակից Հայ մշակույթի բարեկամների ընկերակցության և Հայ մատենադարանի: Այստեղ Նա հետևում է նաև գրաբարի դասընթացներին՝ պոլսաահայ մտավորական Հ. Ծ. Սիրունու ղեկավարության ներքո:

1936 թվականին, բազմակողմանիորեն զարգացած, կայուն և խոր գիտելիքների տեր, Նա ավարտում է պետական համալսարանը՝ ավարտաճառներկայացնելով «Կարգապահության հարցը մանկավարժության մեջ» թեման, և համալսարանից վկայվում է որպես մանկավարժ:

1937 թվականին ավարտում է նաև համալսարանի գործնական մանկավարժության բաժինը:

Բարձրագույն կրթություն ստացած համալսարանականի առաջ բացվում է գործունեության պատվավոր ասպարեզ: Աշխատելու մեծ եռանդով նա մտնում է կյանքի մեջ՝ իր ժողովրդին նվիրվելու անուտ ցանկությամբ:

Միջնակարգ կրթությունն ստանալուց անմիջապես հետո իսկ, 1929 թվականից, մինչև 1943-ը Լևոն Պալճյանն ունեցել է բեղմնավոր ու հանրագուտ ուսուցչական աշխատանք Բուխարեստի հայ կյանքում, իր ողջ գիտակցական կյանքն ու գիտելիքները նվիրելով ռումինական հողի վրա հասակ առած հայ նոր սերնդի հայեցի դաստիարակության գործին:

Այսօր ռումինահայ նոր սերնդի մեջ հազարների է հասնում թիվն այն երիտասարդների, որոնք աշակերտի երախտագիտական ամենաքննադատ զգացմունքներով են կապված իրենց նախկին սիրելի ուսուցչի հետ:

Եվ այդ իրողությունը պատահականություն չէ: Դպրոցում նա իր շուրջն ստեղծում է ջերմ սթեռնոլորտ և վայելում հեղինակություն: Նա սիրվում է: Ուսանողության մտքում և հոգում տպավորվում է ուսուցիչ և մանկավարժ պրն. Պալճյանի պայծառ կերպարը, իր բարոյական և գաղափարական մարդու սրտառուչ պատկերով, պատկեր, որը երբեք չի եղծվում ժամանակի ընթացքում: Դպրոցում, հասարակության մեջ նրա ներկայությունն ուսանողության շրջանում առաջ է բերում ոգեկան խանդավառություն: Նրան սիրում էին բոլորը: Նա իր դասերի մեջ դնում էր ոչ միայն իր հմտությունը, այլ նաև իր քաղցր հոգին, իր անսպառ եռանդը, հավատը, լավատեսությունը:

Համալսարանում ուսանելու առաջին իսկ տարիներից նա մի խումբ գիտակից և նվիրված հայ երիտասարդների հետ Բուխարեստում աշխատում է Հայ ուսանողական միության մեջ՝ պետական և այլ օտար դպրոցներում սովորող հայ նոր սերնդի մեջ ազգային ոգի արթնացնելու և նրանց հայ սյահելու ազնիվ գաղափարով: Ռումինահայ նոր սերնդի լավագույն ու խոստումնակից կորիզը հավաքվում է Հայ ուսանողական միության մեջ՝ ապրելով հայ ժողովրդի հոգներով, ուրախություններով ու ապագայով:

1937—1942 թվականներին որոշ մտերմություն է ստեղծվում ռումինահայ թեմի առաջնորդ, հանգուցյալ տ. Հուսիկ արքեպիսկոպոս Չոհրապյանի և երիտասարդ ուսուցչի միջև, հոգևոր և մտավորական հողի վրա: Այս շրջանին է, որ ապագա Հայրապետը ծանոթանում է հայ եկեղեցու պատմությանը, դավանանքին, իրավունքին և կազմակերպությանը: Նույն շրջանին է մտնում նաև, որ նրա հոգու և գիտակցության մեջ ամրապնդվում է սերը և պաշտամունքը դեպի ս. Էջմիածին: Երիտասարդ ուսուցիչն իր ազատ ժամերն անց է կացնում սրբազանի հարուստ գրադարանում, պարսպում հայ եկեղեցու պատմության, աստվածաբանության, իրավունքի ուսումնասիրությամբ:

1942 թվականի հոկտեմբերին վախճանվում է Ռումինիայի առաջնորդ գերաշնորհ տ. Հուսիկ արքեպիսկոպոս Չոհրապյանը: Առաջնորդական պատասխանատու Աթոռը մնում է թափուր: Այդ օրերին «աչք ամենեցուն ի նա հույեին»: Բոլորի մտքում գունկել էր, արդեն իսկ առաջնորդը: Դա ուսուցիչ, համալսարանավարտ, հավատավոր ու ազնիվ Լևոն Պալճյանն էր: «Զայն բազմաց՝ ձայն Աստուծոյ»: «Ոչ եթե անձամբ ոք առնու զպատիի [պաշտաման], այլ կոչեցեալն յԱստուծոյ՝ որպէս և Ահարովն» (Եբր. Ե 4): Բահանայության պատիվն աստվածային կոչում է: Նախախնամական տնօ-

րինությամբ Նա կոչվում է այդ բարձր հոգևոր առաքելության ակիրական գործին: Աստվածային կոչումից հետո կար նաև ժողովրդի բարի վկայությունը. «Պարտ է վկայութիւն բարի և յարտաքնոցն ունել, զի մի՛ ի նախատինս անկանիցի» (Ա Տիմ. Գ 7):

Եվ ահա Աստուծո կոչումով, իր ժողովրդի ընտրությամբ, 1943 թվականի սեպտեմբերի 30-ին Լևոն-Կարապետն Աթենքում, Տուրդուդի-Ֆիքսի հայոց և Կարապետ եկեղեցում, Հունաստանի հայոց առաջնորդ գերազնորի տ. Կարապետ արքեպիսկոպոս Մազլումյանի ձեռքով, վարդապետ է ձեռնադրվում՝ վերանվանվելով տ. Վազգեն վարդապետ, մեկ օրում բարձրանալով աշխարհական վիճակից մինչև վարդապետություն:

Երիտասարդ ուսուցիչը շուտով Իր հարազատ ճանապարհն է գտնում՝ հայ եկեղեցուն և ժողովրդին ամբողջովին ծառայելու ասպարեզում: Ուսուցիչը դառնում է վարդապետ, հոգևոր ուսուցանող: Նա հրաժարվում է աշխարհիկ կյանքից, ինչպես և Մեսրոպն իր ժամանակին՝ զինվորական ասպարեզից, դառնալով վանական-վարդապետ: Նախախնամության և Աջն էր ընտրել և առաջնորդել Նրան: Նա Նախախնամության կողմից առաքված ծառան հանդիսացավ մեր օրերում, մեր եկեղեցու և ժողովրդի համար:

Բուխարեստի հայոց եկեղեցու ավագերեց տ. Իզնատիոս ավագ քահանա Քիլիմյանի ընկերակցությամբ դեպի Աթենք կատարած ճանապարհորդությունից վերադառնալուց հետո, երիտասարդ վարդապետն Իր քառասունքն անց է կացնում Սուչավայի հայոց և Հաճկատար պատմական վանքում, արմաշական տ. Գնել ավագ քահանա Մանուչյանի հոգևոր վարժողության ներքո:

Աղոթքի, հսկման և ծոմապահության այդ քառասուրջա շրջանից հետո, հոգով պայծառացած և աճած, իմաստությամբ պատկավոր և Իր կոչման արժանավայել գիտակցությամբ, վերադառնում է Բուխարեստ՝ ստանձնելու համար թեմի նախ առաջնորդական փոխանորդի և ապա թեմական առաջնորդի պաշտոնը: Իր անդրանիկ սուրբ պատարագը մատուցում է Բուխարեստի և Հրեշտակապետաց եկեղեցում նոյեմբերի 28-ին, ծովածավալ բազմության առջև, և նույն օրը, թեմական պատգամավորական ժողովը, նախագահությամբ Արտաշես Գասարճյանի, միաձայնությամբ ընտրում է Նրան թեմի առաջնորդական տեղապահ: Դեկտեմբերի 1-ի պետական հրովարտակով Ռումին կառավարությունը հաստատում է Նրա ընտրությունը:

Նորընծա Վազգեն վարդապետը, գիտակից Իր հոգևոր նոր կոչմանը և ուսանելու անհագ ծարավով տոգորված, արձանագրվում է իբրև ուսանող Բուխարեստի պետական համալսարանի աստվածաբանական ֆակուլտետում և հետևում դասընթացներին 1943 և 1944 տարիներին:

Տ. Վազգեն վարդապետն Իր նոր ու բազմապահանջ առաջնորդական պաշտոնում հանդես է բերում Իրեն հատուկ լրջություն, ջերմություն և կազմակերպչական ընդունակություն: Նա Իր շուրջն է հավաքում գաղութի ազնիվ ու հայրենասեր տարրերին և նրանց օժանդակությամբ մի գլուխ բարձրացնում թեմի ազգային-եկեղեցական կյանքը, ստեղծում պատկառանք, մեծ հեղինակություն, որպես պատրաստված, խոհուն և հոգեկիր եկեղեցական: Թեմը սիրով և երախտագիտությամբ է համախմբվում իր հոգևոր հովվի շուրջը՝ թե ու թիկունք հանդիսանալով Նրա ազգօգուտ և եկեղեցաշեն գործունեությանը: Նա գլխավորում է գաղութի ողջ ազգային-եկեղեցական և մշակութային կյանքը՝ իր հոտի ծոցում ուժեղացնելով ազգային-եկեղեցական միասնականության ոգին, ստեղծելով հետաքրքրություն դեպի

հայ մշակույթը և արծարծելով բոցավառ սեր՝ դեպի պանծալի մեր հայրենիքը:

Առաջնորդության տարիներին Նա միայն իր հոտի կողմից չէ, որ սիրվում է և հարգվում: Նա քրիստոնեական եղբայրության սրտագին կապ է հաստատում ումիճ օրթոդոքս եկեղեցու նվիրապետության և հոգևորականության հետ, ինչպես նաև ջերմագին հարաբերություններ՝ Ռումինիայի ժողովրդական Հանրապետության կառավարության և պետական բարձրաստիճան անձնավորությունների հետ, որպես տեղի լիիրավ և հարազատ քաղաքացի: Որպես արդյունք այդ սերտ հարաբերությունների, ումիճահայ եկեղեցին անձնախրճիթաց հեղինակություն է վայելում ումիճ եկեղեցու և ժողովրդի շրջանակներում: Նա առանձին մեծ շուքով կազմակերպում է հանդեսներ՝ նվիրված ս. Գրիգոր Նարեկացու ծննդյան 1000 և Վարդանանց պատերազմի 1500-ամյակներին՝ հանդես գալով ումիճներեն լեզվով բանախոսություններով և դասախոսություններով ումիճ հոգևորականության և մտավորականության առջև:

Վազգեն վարդապետի առաջնորդության տարիներին ամրապնդվում է թեմի կապը Մայր Աթոռ ս. Էջմիածնի և մայր հայրենիքի հետ: Ռումինահայ թեմը և հայ գաղութը Նրա օրով ապրում են հայրենիքի սիրով և Մայր Աթոռի գաղափարներով: Ռումինիայում իր առաջնորդության տարիներին Նա արժանանում է Մայր Աթոռի բարձր գնահատությանը և վայելում երջանկահիշատակ Գևորգ Զ կաթողիկոսի սերն ու վստահությունը:

Ռումինահայ թեմի անունից Վազգեն վարդապետը, որպես եկեղեցական պատգամավոր, 1945 թվականին մասնակցում է ս. Էջմիածնում գումարված ազգային-եկեղեցական ժողովին ու կաթողիկոսական ընտրությանը և իր ձայնը տալիս հօգուտ Գևորգ արքեպիսկոպոս Չորեքչյանի:

1948 թվականին ումիճահայ թեմի պատգամավորական ժողովը Վազգեն վարդապետին ընտրում է առաջնորդ, իսկ ազգիս հանգուցյալ Վեհափառ Հայրապետը՝ Գևորգ Զ-ը, 1948 թվականին, իր հայրապետական բարձր գնահատմանն արժանացնելով Նրան՝ իր ազգօգուտ և եկեղեցուսէն գործունեության համար, մայիսի 23-ին, կիրակի օրը, ս. Էջմիածնի Մայր տաճարում, իր հայրապետական օրհնությամբ, Վազգեն վարդապետին ընտրում է ծայրագույնության աստիճան:

Ծայրագույն վարդապետության աստիճան ստանալուց հետո առաջնորդ հայր սուրբը դափնիների վրա չի հանգստանում: Նա հետագա տարիներին իր եռանդուն ու նվիրված պաշտոնավարությամբ և ժողովրդանվեր հայրենանվեր գործունեությամբ արդարացնում է իր վրա դրված հայրապետական բարձր վստահությունն ու քաջակերությունը և ավելի սիրվում ու հարգվում իր ժողովրդից:

1951 թվականի հուլիսի 8-ին հանգուցյալ Գևորգ Զ կաթողիկոսը, ումիճահայ թեմի ազգային-եկեղեցական իշխանությունների և ժողովրդի միաձայն վկայության վրա, Վազգեն ծայրագույն վարդապետին ընտրում է եպիսկոպոսական աստիճան:

Նորապասկ արքազանը, իրեն հատուկ կորովով, անաղմուկ ու շինարար աշխատանքով և անձնվեր ծառայությամբ շարունակում է իր առաջնորդական պաշտոնը՝ հօգուտ իր թեմի ազգային-եկեղեցական կյանքի զարգացման և կազմակերպման:

1954 թվականի մայիսին, երջանկահիշատակ Գևորգ Զ կաթողիկոսի

թաղման տխուր առիթով, Վազգեն սրբազանը գլխավորում է ռումինահայ թեմի պատգամավորությանը:

1954 թվականի հունիսին, երջանկահիշատակ Ս. Տ. Գևորգ Զ կաթողիկոսի մահից հետո, ս. Էջմիածնում գումարված եպիսկոպոսական ժողովում գերաշնորհ տ. Վազգեն եպիսկոպոս Պալճյանն ընտրվում է ս. Էջմիածնի Գերագույն հոգևոր խորհրդի անդամ:

1955 թվականի հունվարին, բուլղարահայ թեմի դիմումով և Գերագույն հոգևոր խորհրդի հաստատմամբ, Վազգեն եպիսկոպոսն առանձնում է հսկ բուլղարահայ թեմի առաջնորդի պարտականությունները:

Բացի ուսուցչական, հասարակական և եկեղեցա-վարչական բեղմնավոր գործունեությունից, Վեհափառ Հայրապետն ունեցել է նաև գրական շնորհակալ աշխատանք:

1937 թվականին Նա իջել է գրական ասպարեզ որպես հրապարակագիր՝ բովանդակալից հոդվածներ և ակնարկներ գրելով ռումինահայ կյանքի և հայ մշակույթի մասին: Գրական առաջին իսկ քայլերից նա հանդես է բերել մտածման ինքնուրույնություն, իրավ հայրենասիրություն:

1937 թվականի հունիսին Նա ռումինահայ համալսարանական մի քանի հայրենասեր ընկերների հետ հրատարակում է «Հերկ» ամսագիրը՝ բաղկացած 16 մեծադիր էջերից: Լևոն-Կարապետ Պալճյանն Ինքն էլ խմբագրում է այդ մտքի հանդեպը՝ ստորագրելով այնտեղ խմբագրականներ և հոդվածներ հայ մշակույթի, հայոց պատմության, հայ ոգու, հայ մտքի, ս. Էջմիածնի, հայ երիտասարդության, հայ սփյուռքի մասին շահեկան և իմաստալից խորհրդածություններով:

«Հերկ»-ի նպատակն է եղել «մտքի դիսիպլին» ստեղծել հայ կյանքից ներս և նոր ու թարմ մտածումներով, ասպրումներով ու գործունեությամբ տեղ գրավել հայ կյանքում:

«Հերկ»-ի շուրջ բոլորված երիտասարդները պաշտպանում էին «մտքի թագավորության» ազատությունն ու անկախությունը: Հայ հայրենիքի, հայ ժողովրդի, Հայաստանյայց եկեղեցու, հայ մշակույթի, հայ ոգու, հայ սրբությունների պաշտպանության համար էր, որ նրանք ճանապարհ էին ընկել: Փիլիսոփայության և քաղաքականության բնագավառներում նրանք դեռ «որդնման» մեջ էին, բայց կազմակերպվում էին այդ ուղղությամբ և աշխատում ու առաջնորդվում՝ սփյուռքի հայ մարդու մտքի ու հոգու «հորիզոնը բանալ, զայն ազատել միայն կուսակցական ստահոգությանց մեջ ապրելու մոլորանքեն»:

«Հերկ»-ի խմբագրության կողմից սփյուռքի հայ ժողովուրդը դիտված է որպես իմացական հոգեղեն մի հավաքականություն, որ պետք է ապրի ազգային-հայրենասիրական գիտակցության դիսցիպլինի տակ:

Կ. Պալճյանը «Հերկ»-ի մեջ հանդես է գալիս հրապարակագրի Իր խոստումնալից տաղանդով, գրական փորձով ու ճաշակով: Երիտասարդ խմբագիրը, ինքնատիպ ոճով ու ինքնուրույն փիլիսոփայությամբ, մեր ազգային-եկեղեցական և մշակութային կյանքի շուրջ, ընթերցողի մտքում արծարծում է հայրենիքի սերը, հայ մշակույթի պաշտամունքը, հայ եկեղեցու հույրը, հրավեր կարդում բոլորին՝ առաջնորդվել գիտության լույսով, մտածման, կարգապահության ճանապարհով:

Այդ օրերին սփյուռքի հայությանը հուզող ազգային-եկեղեցական և մշակութային հարցերը երիտասարդ խմբագրի գրչի տակ խորհրդածության

նյութ էին դառնում գրական գեղեցիկ և ոգեշնչող հոդվածների մեջ՝ գրված համոզմունքով ու լավատեսությամբ:

«Հերկ»-ը լույս տեսավ 12 համար միայն և փակվեց նյութական պայմանների պակասի պատճառով: Այնուամենայնիվ նա ուներ ընթերցողների լայն շրջանակ թե՛ Ռուսիայում և թե՛ սփյուռքի գրական շրջանակներում:

«Հերկ»-ը մշակութային խրախուսիչ երևույթ էր ուսման համար կյանքում: 1938 թվականի հոկտեմբերին Բուխարեստում, Ռ. Մկրտիչ Պոտուրյանի «Գաղութահայ տարեգիրք»-ի մեջ, լույս տեսավ Կ. Պալճյանի «Աճճավորության գաղափարի մասին (մտածումներ)» խորագիրը կրող փիլիսոփայական ուսումնասիրությունը: Այդ ուսումնասիրության մեջ Կ. Պալճյանը փիլիսոփայական և հոգեբանական դիրքերից քննության էր առնում պատմականորեն կազմակերպված «աճճավորություն» մարդը, որպես կենսաբանական, հոգեբանական և հասարակական էակ:

1940 թվականին Բուխարեստում, «Հայ մամուլ»-ի տպարանում, լույս տեսավ Կ. Պալճյանի 62 էջից բաղկացած «Մուսա լեռան հայերը Ֆրանց Վերֆելի վեպին մեջ» վերլուծական ուսումնասիրության փորձը:

Կ. Պալճյանի «Մուսա լեռան հայերը Ֆրանց Վերֆելի վեպին մեջ» ուսումնասիրությունը հայրենասիրական շնչով գրված մի գրախոսական է «Մուսա լեռան քառասուն օրերը» վեպի մասին, որը «մարդկության ընծա կուտա հոյակապ ողբերգության մը կենդանի պատմությունը» (էջ 8):

1943 թվականին Բուխարեստում, «Ալյուինցա» տպարանում, լույս է տեսնում Կ. Պալճյանի «Խրիմյան Հայրիկ որպես դաստիարակ» 155 էջից բաղկացած մանկավարժական ուսումնասիրությունը:

Գիրքը բաղկանում է տասնմեկ երթագլուխներից, որտեղ, առաջին անգամ լինելով, ձեռնհասորեն և ծավալուն կերպով ուսումնասիրության առարկա է դարձել Խրիմյան Հայրիկի մանկավարժական վաստակը: Կ. Պալճյանի այս ուսումնասիրությունը նորություն էր իր տեսակի մեջ և դրանով իսկ կրկին արժեքավոր, հետաքրքիր ու այծմեական:

1945 թվականին Բուխարեստի «Ալֆա» տպարանում լույս է տեսնում Վազգեն վարդապետի Պալճյանի «Մեր պատարագը» աշխատությունը, որտեղ հավատացյալ հայ ժողովրդի և մեր եկեղեցու նորահաս սերնդի համար հասկանալի ձևով բացատրվում է սուրբ պատարագի խորհուրդը: Գիրքը բաղկացած է 104 էջից:

1945 թվականին կրկին «Ալֆա» տպարանում լույս է տեսնում նաև Վազգեն վարդապետի «Խոսք հայրենիքի մասին» գրքուկը, Բուխարեստի հայոց եկեղեցում և հրապարակային ժողովներում արտասանված քարոզների և ճառերի ամփոփումը՝ գրված ս. Էջմիածնի Ամենայն Հայոց Հայրապետության ազգընտիր տեղակալ ամենապատիվ տ. Գևորգ արքեպիսկոպոս Չորեքչյանի 1944 թվականի սեպտեմբերի 20-ի ծանոթ շրջաբերական-կոնդակի առիթով, որն ուղղված էր սփյուռքահայ ժողովրդին:

Այդ քարոզների և ճառերի հիմնական գաղափարական բովանդակությունը եկեղեցասիրությունն է և հայրենասիրությունը:

Վազգեն սրբազանը 1954 թվականին Բուխարեստում, «Նոր կյանք» տպարանում, լույս է ընծայում մայր հայրենիք և ս. Էջմիածնի կատարած մի շարք իր այցելություններից բաղած խանդավառ տպավորություններն ու հուշերը՝ «Հայրենի արևին տակ» գեղեցիկ խորագրի ներքո:

Սրբազան հեղինակի «Հայրենի արևին տակ» գիրքը սովորական ճանապարհորդական ուղեգրություն չէ, այլ քնարական վառ գեղումների և խոր-

հրդածությունների, հայրենասիրական տեսիլքների մի երփներանգ ծաղկեփունջ, ինքնաբուխ, անկեղծ, անմիջական և ջերմ:

Այս հատորում սրբազանն արդեն հասուն գրող է, ունի դիտող ու տուրաչք, թափանցող միտք, գրական հարուստ փորձ և գողտրիկ ճաշակ: Լեզուն յուրահատուկ է, պատկերավոր, թեւավոր մտածումներով և պատկերներով հարուստ: Այս ամենը նոր հրապույր, նոր գրավչություն է տվել գրքին:

Հայրենասեր և հավատավոր եկեղեցականը, արվեստագետի բժախնդրությամբ ու բարեխղճությամբ, թղթին է հանձնել Իր տպավորությունները, հուշերն ու խորհրդածությունները կենդանի, խոսուն և տպավորիչ լեզվով, հայրենասերի վառ սրտով: Գիրքը հագեցված է զգայուն հայրենասիրությամբ, ազգային արժանապատվության բարձր գիտակցությամբ:

1955 թվականի սեպտեմբերի 29-ին Մայր Աթոռ ս. Էջմիածնում գումարված ազգային-եկեղեցական սրբագումար ժողովը սեպտեմբերի 30-ի իր երկրորդ նիստում հանդիսավոր իրադրության մեջ ու խանդավառ մըթնոլորտում, արտահայտելով հայրենի երկրի և սփյուռքի մեր ժողովրդի ցանկություններն ու իղձերը, Ամենայն Հայոց Հայրապետ ընտրեց Ռուսիկիայի և Բուլղարիայի թեմերի բարեխնամ առաջնորդ և ս. Էջմիածնի Գերագույն հոգևոր խորհրդի անդամ բարձրաշնորհ տ. Վազգեն եպիսկոպոս Պալճյանին:

1955 թվականի հոկտեմբերի 2-ին, կիրակի օրը, վեհաշուք հանդիսությամբ Մայր տաճարում կատարվեց նորընտիր Հայրապետի կաթողիկոսական օծումը:

1955 թվականի հոկտեմբերի 2-ը համազգային ուրախության և հոգեկան մխիթարության տոն էր Հայաստանյայց առաքելական եկեղեցու, ս. Էջմիածնի և բոլոր հայ հավատացյալ հոգիների համար:

Վեհափառ Հայրապետի ընտրությունն ու գահակալությունը հանդիսացավ մեր ազգային-եկեղեցական տարեգրության բացառիկ ու անմոռանալի տարեթվերից մեկը:

Վեհափառ Հայրապետի ընտրությունն ընդունվեց բովանդակ հայ ժողովրդի կողմից սրտագին ուրախությամբ, անվերապահ հարգանքով ու սրբատուրջ միասնականությամբ: Հայրապետական այդ նոր ընտրությունը վերածվեց հայ ժողովրդի սիրտ և հարգանքի մի վառ տոնի դեպի ս. Էջմիածինը և դեպի նորընտիր Գահակալը: Ազգընտիր Հայրապետն ընդունեց եկեղեցու և ազգի միահամուռ հավատարմությունն ու հպատակությունը, որպես աստվածաբյալ Հայրապետ, և բարձրացավ ս. Լուսավորչի պատմական Աթոռի վրա:

Անցան ազգային-եկեղեցական ժողովի գումարման, Ամենայն Հայոց Հայրապետի ընտրության և օծման, սրբալույս մեռնի օրհնության ու առաջին 9 եպիսկոպոսների ձեռնադրության խանդավառ և պատմական օրերը: Մայր Աթոռը, իր նորընտիր Հայրապետի գլխավորությամբ, ներամիտփվեց նորից իր վանական խաղաղ ու լռին շրջանակի մեջ: Երիտասարդ Հայրապետը, Իրեն հատուկ հետևողականությամբ և գործիմացությամբ, առաջին իսկ օրերից, ձեռնամուխ եղավ Մայր Աթոռի հոգևոր-վանական, մշակութային, տնտեսական կյանքի վերակառուցման ծանր ու պատասխանատու աշխատանքներին:

Վեհափառ Հայրապետը, Իր գահակալության առաջին իսկ օրերից, Մայր Աթոռի միաբանությանը շրջապատեց հայրական գուրգուրանքով ու ջերմությամբ: Մայր Աթոռում ստեղծվեց խաղաղ ու առողջ հիմքերի վրա

դրված վանական կյանք և միաբանական մթնոլորտ: Վեհափառ Հայրապետը սխառեմատիկ կերպով և մեծ կարևորությամբ Իր հոգածու ուշադրությունը կենտրոնացրեց Մայր Աթոռի երիտասարդ միաբանության հոգևոր դաստիարակության և ի մասնավորի բարոյական նկարագրի կազմության վրա:

Վեհափառ Հայրապետի հայացքի տակ և առաջնորդության ճեքք աչքով Մայր Աթոռում հասակ է առել մի նոր սերունդ, աճել և ամրապնդվել մի նոր միաբանություն՝ տոգորված Վեհափառ Հայրապետի հավատով, լավատեսությամբ, ծառայության ոգով, և որն արդար հպարտությամբ է կրում իր սուրբ վեղարը: Վեհափառ Հայրապետն Իր հոգով, Իր գաղափարով, «ըստ իրում պատկերի և նմանութեան», դաստիարակում է միաբաններին, իսկ «որդի հարազատ զնմանութիւն հօրն բերէ»: Վեհափառ Հայրապետն ապրում է Իր միաբանների, Իր հոգևոր որդիների մեջ Իր տեսիլքով և օրհնակով: Իգուր չէ, որ Վեհափառ Հայրապետը վարդապետն է հույսեր է կապել Մայր Աթոռի երիտասարդ միաբանների հոգևոր, բարոյական, իմացական աճման, կատարելագործության հետ, նրանց խոստումնալից ապագայի հետ: Երիտասարդ միաբանները վաղը շարունակելու են Նրա մեծ գործը:

1955 թվականի դեկտեմբերի 1-ին Վեհափառ Հայրապետը գրեց Իր օրհնության անդրանիկ կոնդակը, որը միաժամանակ Նրա ապագա գործունեության և ծրագրերի մի ամփոփ խտացումն էր:

Նորին Ա. Օծություն Տ. Տ. Վազգեն Ա կաթողիկոսի հովվապետական այցելություններն արտասահման 1956—1978 թվականների ընթացքում մեծ իրադարձություն հանդիսացան սփյուռքի հայության ազգային-եկեղեցական կյանքում:

Նորին Ա. Օծություն Վեհափառ Հայրապետն արտասահմանում Իր հավատացյալ և հայրենասեր զավակների կողմից գտավ փառախեղ ու սրտագին ընդունելություն: Սփյուռքի հայությունը զգաց, որ Ամենայն Հայոց Հայրապետությունն ինչպես միշտ, այնպես էլ այժմ հանդիսանում է հայոց հավատի բարձր բերդը և այն հոգևոր կամուրջը, որ կապում է ի սփյուռու աշխարհի ցրված հայությունն իր մայր երկրի հետ: Այս բարեբաստիկ այցելությամբ էլ ավելի խորացավ հայ ժողովրդի սերն ու հավատարմությունը դեպի հայ հավատի կենտրոն և լուստ խորան Մայր Աթոռ ս. Էջմիածինն ու նրա արժանավոր Գահակալը, և էլ ավելի ծաղկեցին սփյուռքի հայության հույսերը դեպի հայ ժողովրդի ու մայր հայրենիքի պայծառ ապագան: Հայ եկեղեցու մեծ Հովվապետը լի է երկնառաք ներշնչմամբ և սիրով դեպի եկեղեցին ու ազգը, որոնց բարօրությունն ու ծաղկումն են և կմնան Վեհափառ Հայրապետի կյանքի միակ նպատակը:

Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետն արտասահման Իր ուղևորությունների ընթացքում արժանացել է նաև քրիստոնեական քույր եկեղեցիների կրոնական պետերի և կառավարական բարձրաստիճան անձնավորությունների ջերմ ու սիրալիք ընդունելությանը:

Վեհափառ Հայրապետի գահակալությունից անցել են ավելի քան 20 տարիներ: Այդ տարիները լի են եղել հոգևոր, մշակութային, շինարարական, կազմակերպչական, վանական-վարչական ոգերիչ ու բեղմնավոր իրագործումներով, խանդավառ հեռանկարներով: Այդ աշխատանքների պայծառ փաստն է «Էջմիածին» ամսագիրը, որը հանդիսացավ Հայոց Հայրապետի քսան տարիների գահակալության սրտառույ ճիգերի, կառուցումների, հաջողությունների կենդանի օրագրությունը: Ամսագրի առաջին էջերը միշտ

գարդարել են հայրապետական կոնդակները, կրոնաշունչ ու հայրենասրույր պատգամներն ու ելույթները, հովվապետական ուղևորությունների նկարագրությունները: Այդ բոլորն ամփոփվել են «Կազգեն Ա Հայրապետ Հայոց երեք մեծ հատորների մեջ:

Վեհափառ Հայրապետի գահակալությունը մի նոր ու խոստումնալից էջ է հանդիսացել Հայաստանյայց առաքելական եկեղեցու նորագույն պատմության շրջանում: Նա եկավ բազմելու Լուսավորչի Աթոռի վրա խոր հավատով, մեծ եռանդով, գործունեության և մանավանդ շինարարության նոր հեռանկարներով: Նա եկավ ոչ թե փառավորվելու, այլ նոր փառքով ծածկելու Աթոռը՝ այն վերստին դարձնելով հոգևոր, մշակութային նոր կյանքի մի սրբազան տաճար: Նրա ներկայությունն այսօր Մայր Աթոռում երկնա-
նաբ օրհնություն է:

Ա. Հ.

